ԿՈՆՖԵՐԱՆՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Լենինգրադի էրմիտաժում մարտի 20—25-ը կայացավ կոնֆերանս՝ «Մերձավոր Արևելք, Կովկաս, Միջին Ասիա. մշակույթների փոխադարձ կապի հարցը միջին դարերում» թեմայով՝ նվիրված ակադեմիկոս Հ. Օրբելու հիշատակին։ Կոնֆերանսը ներածական խոսքով բացեց ակադեմիկոս Բ. Բ. Պիոտրովսկին, որը կանգ առավ էրմիտաժում արևելագիտության զարգացման և այդ գործում Հ. Օրբելու խաղացած կարևոր դերի վրա։

Բազմաթիվ զեկուցումներում մասնակիցները լուսաբանեցին կարևոր հարցեր, որոնցից հայագիտությանը և կովկասագիտությանը առընչվում էին հետևյալները։ Տ. Ա. Իզմայիլովա *(Լենինգրադ)* «Անիի 1298 թ. պատկերազարդ ձեռագիրը»։ *Ձեռագրի ծաղկողը, ըստ զեկուցողի, Արճեշի գրչության կենտրոնից էր։* Է. Մ. Կորխմազյան *(Երևան)* «XIV—XV դդ. Ղրիմում աշխատած հայ մանրանկարիչների արվեստի մասին», *որտեղ արծարծվեց Ղրիմի հայ մանրանկարիչների և տեղական արվեստի ու ճարտարապետության փոխազդեցության հարցը։* Ա. Ա. Իվանով *(Լենինգրադ)* «Կուբաչիի բարձրաքանդակները, նրանց պատմությունը և ուսումնասիրության հեռանկարները», *որտեղ արծարծվեցին Դաղստանի X—XIV դդ. բարձրաքանդակների ճշգրիտ թվագրման և դրանց կրած իրանական և չինական ազդեցության մասին հարցերը։*

Օ. Խ. Խալփախչյանի *(Մոսկվա) զեկուցումը նվիրված էր Սանահնի հուշարձանների ուսումնասիրության, վերակառուցման, ճարտարապետական անսամբլի ձևավորման էտապներին,* Ն. Ս. Տոկարսկու *զեկուցումը (Լենինգրադ)՝ Ամբերդի ճարտարապետության մի քանի հարցերին։ Վրաստանի վաղքրիստոնեական ճարտարապետության մի քանի հարցերին էր նվիրված* Ս. Ս. Կակաբաձեի *զեկուցումը։ Զեկուցողը մեծ կարևորություն տալով խորանի զարգացման հարցին, գտնում է, որ բազիլիկ եկեղեցիների բոլոր տեսակները Վրաստանում ստեղծվել էին IV—V դդ.։* Յու. Ա. Միլլերը *(Լենինգրադ) «Խեցեղեն սպասքը ճարտարապետական շինությունների զարդարման մեջ» զեկուցեց Բայբերդի միջնաբերդի պարիսպների երեսապատման ժամանակ օգտագործված հախճապակե սալիկների, սկուտեղների և այլ իրերի, ինչպես նաև XII—XIII դդ. այլ հուշարձաններում (Անի, Ամբերդ, Վրաստան և այլն) նկատվող նման երևույթի մասին։*

Ա. Ն. Տեր-Ղևոնդյանը *զեկուցեց 1965 թ. Ամբերդում հայտնաբերված ամիրսպասալար Զաքարեի և Իվանեի արաբական արձանագրության մասին, որտեղ խնդրո առարկա գործիչները կոչված են «Արծրունի»։* Հ. Մ. Բարթիկյանը *զեկուցեց բյուզանդական «Դիգենիս Ակրիտաս» էպոսի և «Սասունցի Դավթի» փոխհարաբերությունների հարցի մասին։ Ժխտելով նրանց որևէ աղերսը, նա առնչակցություն է տեսնում հայկական էպոսի և բյուզանդական «Արմուրիսի որդու մասին» էպիկական երգի միջև։* Վ. Օ. Շանդրովսկայայի *(Լենինգրադ) զեկուցումը նվիրված էր Փիլարտոս Վարաժնունու՝ էրմիտաժում պահվող արճիճե կնիքների ուսումնասիրությանը, այդ անձնավորության քաղաքական և ռազմական գործունեությանը XI դ. 70—80-ական թվականներին։* Ա. Յա. Կակովկինը *(Լենինգրադ) ուսումնասիրության նյութ էր դարձրել հայկական արծաթյա մի քանի առարկաների, ձեռագրերի կազմերի արևմտյան տարբեր կրող պատկերագրությունը։*

Ա. Բ. Նուրիևի *(Բաքու) զեկուցումը վերնագրված էր «Աղվանքի տարածքի վրա հայտնաբերված դրսից ներմուծված առարկաները»։ Հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված խեցուց, ապակուց, մետաղից, քարից պատրաստված առարկաները և իրերը զեկուցողի կարծիքով ծագում են Իրանից, Մերձավոր և Միջին Արևելքից։* Ռ. Բ. Գեյոչևը *(Բաքու) զեկուցեց «Աղվանից եկեղեցու կազմակերպման և զարգացման հիմնական էտապների մասին», ցույց տալով, որ քրիստոնեությունը I—II դդ. Աղվանք է մուտք գործել իբրև թե ուղղակի Ասորիքից, որ 628 թ. Աղվանքը երկրորդ անգամ մկրտվեց և որ Գանձասարի կաթողիկոսությունը մինչև XIX դ. աղվանական էր։*

Բազմաթիվ զեկուցումներ կարդացվեցին նաև Իրանի, Մերձավոր Արևելքի և Միջին Ասիայի միջնադարյան արվեստի, մանրանկարչության, ճարտարապետության, առևտրի և արհեստագործության մասին, այն է. «Սասանյան տորևտիկայի դպրոցներից մեկի մասին» (Բ. Մարշակ, *Լենինգրադ), «XII—XIII դդ. Մերձավորարևելյան և Միջինարևելյան մանրանկարչության ծագման մի քանի հարցեր»* (Մ. Վ. Գորելիկ, *Մոսկվա), «Մանրանկարչության Հե-*

բաթի և Մավերաննախրի դպրոցների փոխադարձ կապերի մասին» (Օ. Ի. Գալերկինա, *Լենինգրադ*), *«Ինժեներական մտքի զարգացումը Միջին Ասիայում»* (Վ. Լ. Վորոնինա, *Մոսկվա*), *«Միջինասիական խանականների ճարտարապետական տիպոլոգիայի շուրջը»* (Գ. Ա. Պուգաչենկովա, *Տաշքենդ*), *«IX—XII դդ. միջինասիական և իրանական մզկիթների կոմպոզիցիոն առանձնահատկությունները»* (Ի. Ֆ. Բորոդին, *Մոսկվա*), *«Հյուսիսային Խորասանի ճարտարապետությունը»* (Ա. Մ. Պրիբիտկովա, *Մոսկվա*), *«Նիզամիի պոեմի հերոսներ Ֆարհադն ու Շիրինը Խորասանի նախամոնգոլական շրջանի խեցեղենի վրա»* (Գ. Ն. Իալաշովա, *Լենինգրադ*) և այլն։